

Ծրագիրը մշակվել է հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցության ոլորտները կարգավորող օրենքների պահանջների, նախորդ տարիներին Ազգային ժողովում հրապարակած ծրագրերի, կարգավորման ենթակա բնագավառներում իրականացրած միջոցառումների, կատարած ուսումնասիրությունների, վերլուծությունների արդյունքների հիման վրա: Այն արտացոլում է կարգավորվող ոլորտների իրավիճակն ու առկա հիմնախնդիրները, դրանց լուծման համար անհրաժեշտ աշխատանքների ուղղությունները:

Ծրագիրը բաղկացած է նախաբանից և հանձնաժողովի գործունեության առանցքային ոլորտները ամփոփող յոթ բաժիններից:

Փորձ է արվել վերհանել ոլորտներում առկա հիմնախնդիրները և նշագրել դրանց լուծման գերակայությունները:

Հանձնաժողովը շարունակելու է զարգացնել պետական քաղաքականության մաս հանդիսացող կարգավորման գործընթացը, նպաստելու է տնտեսության զարգացմանն ու մրցակցության ապահովմանը:

Հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտներում այլ ներդրողներ ներգրավելու նպատակով մասնակցելու է տնտեսական միջավայրն ավելի հրապուրիչ դարձնելուն: Հավասարակշռելու է սպառողների և կարգավորվող անձանց շահերը, խրախուսելու է կարգավորող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումները, ազատ տնտեսական մրցակցությունը, կարգավորելու է էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման ընթացակարգերը, սակագները:

Ընդունելու է հանրային կամ ազգային անվտանգության շահերից բխող հատուկ կանոններ, կարգեր: Ընդլայնելու է ծառայությունների մատուցման, մատչելիության և հասանելիության աշխարհագրական տարածքը:

Հանձնաժողովը հետևելու է 2020թ նախատեսվող քաղաքական գործընթացների ժամանակաշրջանում հեռարձակում իրականացնող հեռուստա-ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանմանը ու ստուգելու է դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Հանձնաժողովն ուշադրության կենտրոնում կպահի էներգետիկայի բնագավառում էլեկտրաէներգիայի, բնական գազի, ջրի սպասարկման որակի նկատմամբ ներկայացվող պահանջների հստակեցման աշխատանքները: Շարունակվելու են ցանցի միացման վճարների, գնագոյացման ընթացքի, սպառողների դիմումների և բողոքների ընթացքավորման նկատմամբ մշտադիտարկումներն ու մոնիթորինգները: Որպես կարգավորման կարևորագույն գործիքների կիրառում՝ կշարունակվեն լիցենզավորման գործընթացները,

միաժամանակ հետամուտ լինելով նշված գործընթացին բնորոշ գործիքակազմի հետևողական կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Հաշվի առնելով, որ ներդրումային ծրագրերը կարևոր նշանակություն ունեն ինչպես բնագավառների, այնպես էլ ամբողջ տնտեսության, սպառողների սպասարկման որակի համար ու փոխկապակցված են նաև զբաղվածության ցուցանիշների հետ, Հանձնաժողովը փորձելու է դրանք դիտարկել որպես սակագների ձևավորման կարևոր գործոն, և դրանց հիման վրա որոշելու է ներդրումների վերադարձելիության ողջամիտ ժամկետներ ու սակագներ:

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում

Հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության շարժական կապի օպերատորների միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը կնվազեցվեն Արցախում և Հայաստանում օպերատորների կողմից մատուցվող ռոումինգի ծառայությունների սակագները՝ հետևյալ չափերով.

- Ելքային զանգերի սակագները կնվազեն շուրջ 25%-ով, այնուհետև նշված ժամանակահատվածում նվազումը կհասնի մինչև 30%,

- մուտքային զանգերի սակագները կնվազեն շուրջ 40%-ով, այնուհետև՝ մինչև 45% (պետք է նշել, որ 2004թ. հունվարի 1-ից սկսած «Ղարաբաղ Տելեկոմ»-ի բաժանորդների համար Հայաստանում մուտքային զանգն անվճար է՝ ընկերության սեփական նախաձեռնությամբ),

- տվյալների փոխանցման և ինտերնետ հասանելիության ծառայությունների սակագները՝ շուրջ 50%-ով, այնուհետև՝ մինչև 65%,

- կարճ sms հաղորդագրությունների սակագները՝ շուրջ 65%-ով, այնուհետև՝ մինչև 75%:

2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ կմտնի նշված գործընթացի ապահովման նպատակով Հանձնաժողովի կողմից հաստատված՝ փոխկապակցման ծառայությունների առավելագույն վճարների չափերի կիրառման ժամանակացույցը:

Համաձայն գերիշխող օպերատորի կողմից ներկայացված ծրագրի՝ 2018-2019 թվականներին ընկերության կողմից սկսված 15,0 մլն ԱՄՆ դոլարի ներդրումների և ժամանակակից սարքավորումների ձեռքբերման շնորհիվ ամբողջովին կարդիականացվի 3G (շարժական ինտերնետ) ցանցը, որն իր հերթին կհանգեցնի շարժական համացանցի ունակության բարձրացմանը շուրջ 10 անգամ. գործող 50 Մբիթ/վրկ հզորությունը կաճի մինչև 500 Մբիթ/վրկ:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում էական բարելավումը բաժանորդների կողմից կնկատվի 2020 թվականի ընթացքում:

2020 թվականին նախատեսվում է նաև իրականացնել մատուցվող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների կարգավորման ենթակա սակագների վերանայման և սահմանման գործընթաց:

Փորձը ցույց է տվել, որ Արցախի Հանրապետությունում անբարեխիղճ մրցակցությունը հիմնականում դրսևորվում է հասարակության մոլորեցման և շփոթեցման միջոցներով: Հանձնաժողովը հետևողական գործունեություն կծավալի անբարեխիղճ մրցակցության դեպքերը բացառելու համար՝ շաբաթական դիտանցումների և լրատվամիջոցների հրապարակումներին հետևելու միջոցով:

Ուշադրության կենտրոնում է պահվելու ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը, քանի որ դրանց կողմից իրականացվող գնային քաղաքականությունը վճռորոշ ազդեցություն է թողնում շուկայում գների ձևավորման գործում: Կշարունակվեն պարենային և ոչ պարենային ապրանքային շուկաների շաբաթական դիտանցումները: Դիտանցումներ կիրականացվեն ինչպես Ստեփանակերտ քաղաքում, այնպես էլ Արցախի Հանրապետության շրջաններում:

Հանձնաժողովը հետևելու է նաև առևտրային ցանցերի ձևավորման գործընթացին, ուսումնասիրությունների արդյունքում բացահայտ վերահսկողություն է սահմանելու գերիշխող դիրք ունեցող առևտրային ցանցերի նկատմամբ, պարբերաբար իրականացնելու է առանձին ապրանքային շուկաների ուսումնասիրություններ՝ ազատ և արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման և կատարելագործման նպատակով: Ծրագրային տարում հանձնաժողովը շարունակելու է ակտիվ համագործակցությունը Արցախի Հանրապետության օրենսդիր, գործադիր, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, գերատեսչությունների, Հայաստանի Հանրապետության գործընկեր հանձնաժողովների, հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների և համագործակցություն հայցող այլ մարմինների հետ:

2020 թվականի ընթացքում, հավատարիմ իր հրապարակային և թափանցիկ գործելաոճին, ինչպես նաև նպատակ ունենալով հանրությանը հնարավորինս ներգրավելու հանրային ծառայությունների կարգավորման գործընթացում, Հանձնաժողովն իր պաշտոնական կայք էջում շարունակաբար կհրապարակի մանրամասն տեղեկատվություն նիստերում քննարկվող հարցերի վերաբերյալ: